ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

21 ՄԱՅԻՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արծրուն Ավետիսյանը, Հարութ Թերջյանը, Արթուր Հովհաննիսյանը, Գոռ Հունանյանը, Եպրաքսի Մալխասյանը, Հրաչիկ Միերյանը, Մյասնիկ Պողոսյան ը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորային Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

Լսեցին .

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկի վերանորոգման համար համայնքի բյուջեից հատկացնել 990. 000 / ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԻԼՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 600 ԳԾԱՄԵՏՐ ՋՐԱԳԻԾ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 89-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրում 600 գծամետր ջրագիծ կառուցելու համար հատկացնել 965.000 / ինը հարյուր վաթսունհինգ հազար / ՀՀ դրամ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրի միջնակարգ դպրոցի նախադպրոցական կրթության միկրոծրագրին համայնքի բյուջեից ներդրում կատարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրի միջնակարգ դպրոցի նախադպրոցական կրթության միկրոծրագրին համայնքի բյուջեից ներդրում կատարելու համար հատկացնել ընդհանուր՝ 755.000 / յոթ հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-049-0001-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.012 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի, « Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 02-049-0001-0032 կադաստրային ծածկագրով 0,012 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխելուն, այն դարձնել, որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ն/

Լսեցին
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՂ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի գործող գերեզմանոցի ցանկապատման աշխատանքներ կատարելու համար համայնքի բյուջեից հատկացնել 985.000 / ինը հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 62-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2024 թվականի մայիսի 21-ի հերթական նիստի օրակարգը՝
2. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի գործող գերեզմանոցի ցանկապատման աշխատանքներ կատարելու համար գումար հատկացնելու մասին
3. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին
4. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծիլքար բնակավայրում 600 գծամետր ջրագիծ կառուցելու համար

համար հատկացնելու մասին
5. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրի միջնակարգ դպրոցի նախադպրոցական կրթության միկրոծրագրին համայնքի բյուջեից ներդրում կատարելու համար գումար հատկացնելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
7. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատելու մասին
8. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրում գտնվող 02-049-0001-0032 կադաստրային ծածկագրով 0.012 հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին
9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 6-րդ մասի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Ծաղկահովիտ բնակավայրի 9-րդ փողոց 4 հողամաս հասցեում գտնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության ներքոհիշյալ հողատարածքը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրել վարձակալության, սահմանել դրա մեկնարկային գինը և հավելաճի քայլի չափը՝
- 02 - 053-0112-0002 կադաստրային ծածկագրով 2,03348 հա հողատարածքը, որի մեկնարկային գին սահմանել 19000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 2000 ՀՀ դրամ,
2. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Ծաղկահովիտ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության ներքոհիշյալ հողատարածքը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրել վարձակալության, սահմանել դրա մեկնարկային գինը և հավելաճի քայլի չափը՝
- 02 - 053 - 0106 -0028 կադաստրային ծածկագրով 1, 71268 հա հողատարածքը, որի մեկնարկային գին սահմանել 12000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 1000 ՀՀ դրամ,
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Ծաղկահովիտ համայնքի ավագանին, **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2024 թվականի հունիսի 25-ը, ժամը 14:00-ն:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ն/

Ավագանու անդամներ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արային Ավետիսյանը